Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Ուսուցիչ՝ Արևհատ Թադևոսյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 4
ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 7
ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում հանրակրթությունը սկսվում է վեց տարեկանից և շարունակվում հետագա տասներկու տարիների ընթացքում: Այդքան երկար ու ձիգ տարիների ընթացքում կրթությունը իրականացվում է դաստիարակության, դաստիարակությունը՝ կրթության հետ համատեղ, համաքայլ: Եվ հանրակրթության ծրագրերի իրականացման բոլոր փուլերում կրթությունը և դաստիարակությունը շարունակվում են միասնաբար՝ իրականացնել իրար լրացնելով:

Այս միասնությունը շատ վառ արտահայտվում է առաջին դասարանի կարևորագույն դասագիրք «Այբբենարանի» նախագրային կամ նախաայբբենական շրջանում (Անժելա Քյուրքչյան, Լիլիթ Տեր- Գրիգորյան հեղինակային խումբ):

Սխալ է այն կարծիքը, թե երեխայի կրթությունը սկսվում է առաջին դասարանից, որովհետև այսօր առաջին դասարան են գալիս տարբեր նախակրթական հաստատություններ հաճախած, երբեմն նաև չհաճախած երեխաներ՝ գիտելիքների, աշխարհաճանաչողության և դաստիարակության որոշակի չափաբաժիններ բերելով իրենց հետ: Այս փաստը հաշվի առնելով՝

դասագիրքը (վերոհիշյալ) կազմված է այնպես, որ, այս տարիքի երեխային չծանրաբեռնելով, հետաքրքրություն առաջացնի, երեխան հաճույքով թերթի, կարդա, սովորի:

ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Առաջին դասարանում մայրենիի ուսուցման համար նախատեսված դասագիրքը «Այբբենարանն » է, որով ուսուցումը իրականացվում է երեք փուլերով՝

1. Նախաայբբենական կամ նախագրային 42 ժամ
2. Գրուսուցման կամ գրաճանաչության 102 ժամ
3. Ետայբբենական 49 ժամ

Այս փուլի նպատակը երեխային ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն

Է, մտածողության աստիճանական զարգացումը, ունեցած գիտելիքների հիմնավորումը, աշխարհաճանաչողության սահմանների ընդլայնումը, բառապաշարի զարգացումը: Այս շարքը կարելի է շատ երկար շարունակել;

Կազմակերպելով՝ նախաայբբենական շրջանը կարողանալով ճիշտ և նպատակային օգտագործել, մեծապես նպաստում ենք երեխայի հետագա ուսումնառության նկատմամբ վերաբերմունքի, պատասխանատվության, հետաքրքրասիրության, պարտաճանաչության, ընկերասիրության և այլ մարդկային որակների ձևավորմանը:

Դպրոցի հետ առաջին հանդիպումից արդեն երեխան որոշակի հուզական ապրումներ է ունենում (նոր խաղընկեր, նոր միջավայր, նոր պահանջներ), այս ամենը որոշակի անծանոթ հույզեր են արթնացնում երեխայի մոտ, և շատ կարևոր է այն, որ այս շրջանում ուսուցիչը կարողանա առանց վնասելու երեխայի հուզական աշխարհը, արտահայտված հույզերին դրական ուղղվածություն տա. այն է՝ աննկատ վերացնի երեխայի վախերն ու կաշկանդվածությունը, քաջալերի երեխայի ինքնուրույն քայլերը (առանց մայրիկի մտնի դասարան), անկաշկանդ արտահայտի իր մտքերը, չլարվի ու չներփակվի իր մեջ, երբ ինչ- որ բան իր մոտ պակաս է կամ թերի (պայուսակում մի մատիտ կամ գրիչ չի գտնում):

Ուսուցիչը պետք է կարողանա երեխայի մոտ արթնացնել վստահություն, որ երեխան հաճույքով մասնակցի ճանաչողական զրույցներին և խաղերին, շփվի և հաղորդակցվի իր հասակակիցների հետ:

Վեց տարեկան երեխաների ուսուցումը իրականացնելը ուսուցչից մեծ վարպետություն, համբերություն, շատ ջանքեր է պահանջում: Բազմաթիվ հնարներ և մեթոդներ կիրառելով, ուսուցումը պետք է կազմակերպվի խաղին զուգահեռ՝ «խաղ-ուսուցում», «ուսուցում- խաղ» սկզբունքով:

Ա. Տեր–Գրիգորյանը իր «Վեց տարեկան երեխաները դպրոցում» մեթոդական նամակում (1986թ.) ուսուցումը խաղի ձևով կազմակերպելու 2 ճանապարհ է առաջարկում՝ ուսուցում – խաղ և խաղ - ուսուցում տարբեր

պայմանների համար առաջին պլան մղելով խաղը կամ ուսուցումը: Նշվում է. «... շաբաթվա առաջին օրերին և օրվա առաջին ժամերին, երբ աշակերտները դեռևս թարմ են, կամային ուշադրությունը բարձր է, նպատակահարմար է իրականացնել առաջին սխեման, իսկ շաբաթվա վերջին օրերին կամ վերջին ժամերին, երբ երեխաները համեմատաբար հոգնած են, կամային ուշադրությունը թույլ է, կարելի է դիմել երկրորդ սխեմային, որը հեշտացնում է ուսուցանվելիք նյութի մատուցումը»:

Նախաայբբենական կամ նախագրային փուլը անբաժան է մաթեմատիկայի նախաթվային բաժնից: Այս երկուսը լրացնում են միմյանց: Մեկ առարկայից տրված գիտելիքը հիմնավորվում, ամրապնդվում է մյուս առարկայի միջոցով: Այսպես, «Աջ-ձախ», «Հաստ-բարակ», «Վերև-ներքև» գաղափարները տրվում են «Մաթեմատիկայի»դասերին և «Մայրենիի» դասերի ընթացքում ամրապնդվում, կրկնվում և քննարկվում են՝ այդպիսով դառնալով հիմնավոր գիտելիք, ամրապնդված փորձի, մտածողության և լեզվական գործառնույթների վրա: Երեխան արդեն գիտի աջ և ձախ ձեռքերը, բայց երբ նպատակ ունեմ դա դարձնել հաստատուն և երբեք չշփոթի այն, ես ուսուցում - ամրապնդումը տանում եմ հետևյալ ձևով:

Մի քանի անգամ նշում և տարբերակում ենք աջ և ձախ ձեռքերը, այնուհետև հրահանգ եմ տալիս «Բարձրացրեք աջ ձեռքը, ձախ ձեռքը»: Հետո հրահանգների հաճախականությունը արագացնում եմ, դիտավորյալ շփոթեցնելով:Երեխաները հաճույքով են մասնակցում խաղին՝ հսկելով իրենք իրենց, որ չշփոթվեն, իսկ շփոթողին աննկատ մոտենում եմ և ուղղում այնպես, որ ընկերներից չազդվի, չկաշկանդվի: Երբ երեխայի մոտ հաստատուն «նստի» աջի ու ձախի տարբերակումը, կարելի է դրա վրա «կառուցել» նաև մարմնի աջ կողմ, ձախ կողմ, աջ աչք, ձախ աչք, աջ ականջ, հագուստի ձախ գրպան, աջ կոշիկ և նմանատիպ տարբերակումներ:

Նախաայբբենական շրջանում կարևոր է զարգացնել երեխայի աշխարհաճանաչողությունը: Երեխան դասագրքում տեսնում է սար է նկարված: Սարի գաղափարը առավել կամրապնդվի, եթե դասասենյակի պատուհանից դիտենք դիմացի սարը, այն պատկերենք կերպարվեստի ալբոմում: Կցուցադրենք նաև Մասիսի նկարը՝ տալով հպանցիկ տեղեկություններ Մասիսի մասին:

Ի դասարանում «Նախաայբբենական» փուլը սկսում ենք դասագրքի հետ ծանոթությունից: Գիրքը շոշափում ենք, նկատում գույները, նկարները, շեշտում, որ գիրքը միայն իրենցն է, իրենց առաջին նվերը դպրոցում, և այն պետք է շատ սիրել և խնամքով գործածել:

Դասագրքի գունագեղ նկարները և պայծառ պատկերները մեծապես նպաստում են երեխայի ուշադրության կենտրոնացմանը և հետաքրքրություն են առաջացնում երեխայի մոտ, քանի որ այդ պատկերները վերցված են երեխայի առօրյա կյանքից, և ամեն պահ դասանյութը կարելի է «լրացնել» երեխայի առօրյա կյանքից դրվագներով:

ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախաայբբենական փուլի նշանակությունը կայանում է նրանում, որ հիմք է ստեղծում՝ հետագա գրաճանաչության փուլի համար: Այս փուլի ավարտին երեխան արդեն ունենում է որոշակի գաղափար պատմության, նախադասության, բառի վանկի, հնչյունի և տառի մասին, և այս ամբողջը գործածվում, հիմնավորվում, ամրապնդվում է գրաճանաչության փուլում:

Նախաայբբենական շրջանի դասի կառուցվածքի մոդելը պահպանվում է հետագա՝ գրուսուցման և ետայբբենական շրջանում, միայն աստիճանաբար, շատ աննկատ խաղային պրոցեսը տեղափոխվում է դեպի աշխատանքային պրոցեսի դաշտ, կապված այն բանի հետ, որ աստիճանաբար բարդանում են

դասերի առաջադրանքները, առավել կենտրոնացում և աշխատելու ցանկություն է արդեն ձևավորված երեխայի մոտ:

Այսպես, ուսուցման առաջին շաբաթներին եթե երեխան նկարում էր՝ փորձելով պատկերների կետերը սահուն միացնել, հատկապես այն պատկերների, որոնց մեջ կան կոր գծեր, կորություններ, ապա հետագա շաբաթներին արդեն բավականին վարժ կարողանում է ինքնուրույն պատկերել կորությունները, որոնք հատկապես շատ են հանդիպում թվերի գրության ուսուցման շրջանում (2,3,6,8 և այլն):

Խաղ - ուսուցում, ուսուցում - խաղ սխեման կիրառում եմ «Ձայնավոր և բաղաձայն»հնչյունների տարբերակման ժամանակ: Քայլում եմ շարքերի արանքով, երկար արտասանելով հնչյուն՝ հաջորդաբար արտասանելով ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, ընդգծում եմ ձայնի տևողությունը: Երեխաները անմիջապես տարբերակում են ձայնի տևողությունը և այստեղ մնում է միայն հավելել անունները՝

կարճ հնչողություն – բաղաձայն

երկար հնչողություն – ձայնավոր

Եվ քանի որ երեխաները դեռ չգիտեն հնչյունները, այս խաղի ընթացքում հաճախ եմ շեշտում հայերենի ձայնավոր հնչյունները,շատ ասելով, իրենց հիշողության մեջ մնան այս հնչյունները: Խաղը կարող է տևել 2-3 րոպե, սակայն գրուսուցման փուլում ամեն օր անդրադառնալով, վերջնարդյունքում հիմնականում բոլորը կարողանում են տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները:

Երեխան շրջապատը ընկալում է տեսնելու, շոշափելու, լսելու, զգալու իր միջոցով, ուստի շատ կարևոր է երեխայի երևակայական (տրամ.) մտածողության զարգացնելու համար քննարկվող նյութը լինի անմիջապես աչքի առաջ, ձեռքի տակ, տեսնի, լսի, զգա համը, հոտը: Այս ամենը հիշողության մակարդակներում մշակվելով՝ կդառնա գիտելիք: Այսպես՝ երեխան եթե համտեսի դեղնաթուշ

տանձը, հետագայում տանձ նկատելիս անպայման այն կներկի դեղին, որովհետև դեղնությունը արդեն դարձել է տանձ գաղափարի հիմնական բնութագրիչ:

Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի «Այբբենարան»-ի նյութերն ընտրված և ներկայացված են այնպես, որ կարելի է դաս - նյութը լրացնել երեխայի դեռևս ոչ լրիվ զարգացած կենսափորձով: «Բնության գրկում» էջ 3 դասանյութը երեխան կարող է լրացնել իր կյանքից դրվագներ ներկայացնելով: (Ընտանիքով գնացել էին բնության գրկում հանգստանալու: Մոտակա գետակի ափին ձկնորսները ձուկ էին որսում: Ինքը տեսել է, թե ինչպես են ձկնորսները ձուկ որսում: Տեսել է, թե ինչպես է բարձր քարի գլխից ջուրը ցած թափվում:) Փաստորեն դասանյութը երեխայի մոտ առաջ բերեց խոսելու, հաղորդակցվելու, պատմելու ցանկություն, աստիճանաբար վերացավ կաշկանդվածությունը, երեխան դարձավ ավելի բաց հաղորդակցվող, շփվող, որն էլ հենց ուսուցման այս փուլի բազմաթիվ նպատակներից մեկն է:

ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախաայբբենական շրջանի դասանյութերի հաջորդական դասավորվածությունը լեզվական նախագիտելիքների ուսուցման յուրացմանը զուգահեռ մի շարք կարևոր խնդիրներ է իրականացնում. դաստիարակության, դաստիարակված անձ ձևավորելու խնդիր, ինքնուրույնության դրսևորման խնդիր, ընտանիքի անդամների նկատմամբ սիրո և հարգանքի ամրապնդման խնդիր, սեփական անձի և արարքի նկատմամբ հետևողականության-պահանջկոտության խնդիր, կենդանիների և բնության նկատմամբ սիրո, ուշադրության և այլ խնդիրներ:

«Առավոտյան մարմնամարզություն» դասանյութը ներկայացնելիս կենտրոնանում ենք հաջորդական միտք կառուցելու և արտաբերելու վրա,

ծանոթանում դասանյութում առկա առարկաների անվանումների գրական հայերեն տարբերակների վրա, որովհետև այստեղ կան բառեր, որոնք քիչ գործածական են երեխայի համար, համարյա անծանոթ (լոգարան, օճառաման, ցնցուղ, հարդարել): Որպեսզի այդ բառերը դառնան երեխայի բառապաշարի մաս, կարելի է մնջախաղի միջոցով ներկայացնել դասանյութի բոլոր գործողությունները, տալ գործողության անվանումը կամ հրահանգավորումները

- Արթնացանք (բոլորս)
- Հագնվեցինք
- Գնում ենք (ուր)
- Որ գործողությունը մոռացանք (անկողինը հարդարելը)
- Լվացվում ենք
- Որ գործողությունը մոռացանք (ատամները լվանալը)
- Շարունակում ենք
- Ի՞նչը ճիշտ չարեց (երեսսրբիչը իր տեղից չկախեց) և այդպես շարունակ:

Այս դասի նորածանոթ բառերը բացատրելիս կարելի է ցուցադրել այդ առարկաները, կամ մեծադիր պաստառի վրա առարկայի նկարը, առարկան ներկայացնենք բնորոշ գործողությամբ (Ավելով ավլում ենք: Սանրով սանրում ենք: Լոգարանում լողանում ենք:)

Նախագրային շրջանում նկատելի աշխատանք է տարվում վերլուծահամադրական, մասնավոր անվանումից ընդհանուր անվանման գաղափարի զարգացման համար: «Այգում» դասանյութի մեջ քննարկում և անվանում ենք այգում աճող պտղատու ծառերը՝ նշելով, որ պտղատու ծառը նշելու համար բավական է պտղի անվանն ավելացնենք ենի մասնիկը և նշում ենք՝

բալենի - ոչ բալի ծառ

տանձենի – ոչ տանձի ծառ

սալորենի – ոչ սալորի ծառ

դեղձենի – ոչ դեղձի ծառ և այլն:

Նմանատիպ աշխատանք ենք կատարում այգում հավաքած մրգերի և մրգերից յուրաքանչյուրի անունը ուսուցանելու ժամանակ:

Հրահանքներ՝

- Դասագրքում գտնենք և անվանենք մրգերը:
- Լրացնենք այս շարքը:

Կարելի է խաղալ այդպիսի խաղ.

- Ցուցադրեք մրգատու ծառերը գարնանը – երեխաները կանգնում են հանգիստ, ձեռքերը վեր, թաթիկները վեր:
- Ցուցադրի՛ր մրգատու ծառերը աշնանը – երեխաները կանգնում են օրորվելով ձեռքերը ուսերի բարձրության,արմունկից կիսածալ, թաթիկները՝ ցած՝ «բերքի ծանրությունից»:

Այս խաղից հետո թեթևանալու համար «կուտենք» քաղցր խնձոր, բալ, ծիրան, կիտրոն (երեխաների դեմքի արտահայտությունների փոփոխությունը զվարճություն և թեթևություն է բերում):

Այս դասանյութի շնորհիվ երեխան ճանաչում և տարբերակում է մեր երկրում տարածված մրգերը: Կազմում է նախադասություններ այգի, աշուն, խնձոր, դեղձ, առատ բառերով: Թվարկում է աշնանը հասունացող մրգերը, դրանց հավաքելու ժամանակը և որպես դաստիարակչական էլեմենտ՝ երեխան իր ուժերը ներածի չափով պետք է օգնի մեծերին բերքահավաքի ժամանակ, չծուլանալ, լինել աշխատասեր:

Վանկի գաղափարը, որպես լեզվաբանական նախագիտելիք, ուսուցանում ենք՝ օգտվելով դասագրքի նկարների գծապատկերներից, այնուհետև աշխատում ենք երեխայի կողմից նշած մրգի անունը ներկայացնել գծապատկերով: Այս աշխատանքը կատարելիս մեզ շատ կօգնեն մրգերի նկարներով պլակատները: Կճանաչենք նկարված մրգերը, կսովորենք նրանց

ճիշտ հայերեն անվանումը, կծանոթանանք բառի վանկային կազմին (քանի վանկից է կազմված): Վանկի գաղափարը կամրապնդենք վանկախաղով՝ այնքան ծափ, որքան վանկ կա այդ բառի մեջ: Այս դասանյութի ընթացքում կարելի է հպանցիկ անդրադառնալ ոչ պտղատու ծառերին, որոնք աճում են ենթադրենք մեր դասարանի պատուհանի աջ կամ ձախ կողմում:

Բառի հնչյունական կազմի մասին տեղեկությունները տրվում են «Մենք օգնում ենք մայրիկին» նկար դասում (էջ 16): Երեխաները նախադասություններով պատմում են դասը՝ կենտրոնանալով նկարի յուրաքանչյուր դետալի վրա: Էջի ներքևում պատկերված են առարկաներ, որոնց անվանումները կարճ և երկար հնչողություն ունեն, օրինակ

աղ, բողկ, աթոռ – կարճ հնչողություն

սեղան, ծաղկաման, խոհանոց, գազօջախ – երկարահունչ բառեր:

Կարճահունչ բառերի գծապատկերներով երեխան կկարողանա հասկանա բառի հնչյունական կազմը (աղ – երկու հնչյուն), այնուհետև կսկսենք աշխատել դասագրքում ներկայացված երկարահունչ բառերի հնչյունական կազմը դիտարկելու վրա, օգտվելով տրված գծապատկերից: Այս աշխատանքը կշարունակենք, փորձելով վանկերով տրված բառերը ներկայացնել հնչյուններով (վա-ռունգ 5 հնչյուն): Այս դասը ևս նկատելի դաստիարակչական կողմ ունի. այն է՝ պետք է օգնել մայրիկին, լինել ուշադիր, ճանաչել և տարբերակել բանջարեղենի տեսակները:

Աշխարհաճանաչողության, լեզվամտածողության և բառապաշարի զարգացման կարևորագույն հարցերը դրված են «Գրական ունկնդրում» դասաժամերի կազմակերպման և անցկացման հիմքում:

«Մեր ընտանիքը» դասանյութը առաջին հայացքից պարզ նկար - պատկեր է, ուր ներկայացված է սովորական ընտանիքի մոդել: Այստեղ կարևոր է պատմությունից նախադասության վերլուծական աշխատանքը (ընտանիքի անդամների զբաղմունքը նշվում է առանձին նախադասությամբ): Դասանյութի

ուսուցման ընթացքում երեխան կհասկանա, որ ընտանիքի մասին ողջ պատմությունը կազմված է առանձին նախադասություններից: Այստեղ սովորում են նաև նոր բառեր և բառակապակցություններ՝ լուսամփոփ, լրագիր, բազկաթոռ, փակցված նկարներ, թելի կծիկ, գուլպա գործել և այլն: Այս ամենին զուգահեռ ամրապնդվում է հարգանքը և սերը ընտանիքի անդամների նկատմամբ, ընդգծվում է քաղաքավարության ընդունված ձևերի կարևորությունը (Մայրիկը Անիի համար ցածրաձայն հեքիաթ է կարդում) և այն կիրառելու անհրաժեշտությունը, համակեցության կանոնների պահպանումը և մարդկային վերաբերմունքի ձևավորման և զարգացման այլ հատկանիշներ:

Լեզվական նախագիտելիքների ուսուցմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները շարունակվում են էջ 8-ում զետեղված «Խաղահրապարակում» դասանյութի ուսուցման ընթացքում: Սա երեխային շատ հոգեհարազատ միջավայր է ներկայացված՝ խաղահրապարակ: Երեխան մի ընդգրկուն հայացքով ընկալում է իր սիրելի միջավայրը և կարողանում է այստեղ պատկերված յուրաքանչյուր խաղամիջոց ներկայացնել մի նախադասությամբ («Աշոտը հեծանիվ է քշում: Հասմիկը ցատկում է պարանով: Աննան խաղում է օղակներով»): Այս նյութում ուսուցիչը համեմատաբար հեշտ է հասնում իր նպատակին՝ գաղափար նախադասության մասին, նախադասությունը կազմված է բառերից: Այստեղ միաժամանակ լուծվում է նաև մի այլ խնդիր: Եթե երեխան մինչ այժմ գործածում էր բարբառային արտահայտչամիջոցներ, ապա այս պահից արդեն ուսուցչի օգնությամբ գործածում է այդ արտահայտչամիջոցների գրական տարբերակները՝

Ճոճորան – ճոճանակ

Պարան է թռչում – Պարանով ցատկում է

Օղակ է խաղում – Օղակով խաղում է և այլն:

«Այբբենարանի» նախաայբբենական մասում զետեղված են «Ճամփորդները», «Աղվեսն ու կռունկը», «Աղվեսն ու ագռավը», «Երեք փիսիկները» հեքիաթները:

Երեխան հետաքրքրությամբ լսում է հեքիաթը, կատարում է եզրահանգումներ, մասնակցում է հեքիաթի գործողությունների ընթացքին՝ դերային խաղով, ձայնի ինտոնացիայով, շարժումների բնականոնությամբ և բառապաշարի ազատ գործածությամբ:

«Երեք փիսիկները» հեքիաթը հանդիպում են նախաայբենական փուլի վերջին էջերում: Այս նկար-դասանյութը կարծես ի մի է բերում լեզվական նախագիտելիքների ամբողջ ծավալը՝ բացահայտելով գիտելիքների յուրացվածության աստիճանը: Նյութի ուսուցումը տարվում է վերլուծական աշխատանքով: Նախ ներկայացվում է ամբողջական պատմությունը՝ օգտվելով նկարների հերթական համարից: Այնուհետև ներկայացնում ենք առանձին նախադասությունները, հետո՝ նախադասությունների «բառային կազմը», որից հետո բառերի հնչյունական կազմը, իսկ դրանից հետո հնչյունները դասակարգում ենք ըստ ձայնի տևողությամբ՝ ձայնավոր, բաղաձայն:

Այստեղ կարելի է նաև աշակերտներին ուղղել հարցեր, որոնց պատասխանները երեխաները կգտնեն ուշադիր նայելով նկարները: Կարող են նաև պատասխանել հարցերի, որոնց մեջ կան ինչպիսի՞, ինչո՞ւ հարցերը.

1. Ինչպիսի՞ն էին փիսիկները:
2. Ինչո՞ւ բոլորը սև գույնի դարձան:
3. Ինչպիսի՞ն էին ծաղիկները:

Այս հարցերից յուրաքանչյուրը ենթադրում է մի քանի պատասխան, որն էլ հենց բացահայտում է երեխայի լեզվամտածողության և բառապաշարի հարստությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով «Այբբենարանի» նախաայբբենական փուլը շատ կարևոր է փոքրիկ դպրոցականի ուսուցումը կազմակերպելու համար: Այն երեխայի մոտ ձևավորում է հաստատուն քայլերով կրթական գործընթացի մեջ մտնելու տրամադրվածություն, տալիս է լեզվական նախագիտելիքներ, հարստացնում է բառապաշարը, զարգացնում է մտածողությունը, համեմատելու և ընդհանրացնելու կարողությունը, ամրապնդվում է գույների և ձևերի տարբերակումը, զարգացնում է գրելու կարողությունը, կապակցված խոսք կառուցելն ու արտաբերելը, ձևավորում և զարգացնում է բնավորության գծեր, որոնց վրա հետագայում պետք է ձևավորվի հասարակության ակտիվ, պահանջված քաղաքացին:

Նախաայբբենական շրջանի ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում է աշակերտի ուսումնական գործընթացի հաջողությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Խոսք և հաղորդակցություն 1 դասարան» Մեթոդական ձեռնարկ, «Երևան», 2013 թ
2. Կանեցյան Գ. Ռ. «Կապակցված խոսքի զարգացումը I դասարան», «Լույս», 1990 թ
3. Ղալթախչյան Ա. «Հայոց լեզու 4», «Լույս», 1998 թ
4. Սարյան Վ. Ուսուցչի ձեռնարկ
5. Տեր-Գրիգորյան Ա. «Վեց տարեկան երեխայի դպրոց», 1986 թ
6. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ. «Այբբենարան», 2022 թ
7. Քյուրքչյան Ա. Ուսուցչի ձեռնարկ